ԿԱՐԾԻՔ

Ռեգինա Ալեքսանի Գալուստյանի «Եվրոպական մտքի դերը «Միություն և առաջադիմություն» կոմիտեի գաղափարախոսության ձևավորման գործընթացում և դրա ազդեցությունը Հայոց ցեղասպանության վրա» Է.00.02. «Համաշխարհային պատմություն» մասնագիտությամբ պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճանի համար ատենախոսության մասին

Թուրք անվանի պատմաբան, «Թուրքիայում քաղաքական կուսակցությունները» եռահատորյակի հեղինակ պրոֆեսոր Թարիք Զաֆեր Թունայան նշում էր, որ հանրապետական Թուրքիայում իրականում գոյություն ունի մեկ կուսակցություն՝ «Միություն և առաջադիմություն», քանի որ մյուս կուսակցություններն այս կամ այն կերպ սերվում են այդ կուսակցությունից: Իսկ երիտթուրքական շրջանի լավագույն մասնագետ Փրինսթոնի համալսարանի պրոֆեսոր Շուքրյու Հանիօղլուն իր մի շարք հոդվածներում առաջ է քաշում այն միտքը, որ այսօրվա Թուրքիայում գերիշխող գարափարախոսությունը հանդիսանում է Իթթիհադական գաղափարախոսությունը, քանի որ Իթթիհադի կողմից առաջ քաշված և սկիզբ դրած Անատոլիայում թուրքական միատարր ազգային պետության ստեղծման ծրագիրը դեռևս չի ավարտվել: Այդ ազգային պետության սահմանները հստակեցվեցին երիտթուրքերի ժառանգորդ քեմալականների ժամանակ 1920թ.-ին որդեգրած Ազգային ուխտով: Երիտթուրքական կառավարման շրջանից սկսած թուրքերը ցեղասպանության, բռնի տեղահանության, ձուլման մեթոդներով թիրախավորել են այն ազգերին, որոնց ապրելու արեալը համընկել է Փոքր Ասիայում թուրքերի ապրելու արեալի հետ՝ հայեր, հույներ, ասորիներ, քրդեր: 2011թ.-ի «Արաբական գարունը» հնարավորություն տվեց Թուրքիային հարձակողական քաղաքականություն վարել նպատակ ունենալով դուրս գալու Ազգային ուխտով նախագծված թուրքական ազգային պետության սահմանին՝ Մոսուլ-Հալեպ գծով: 2017թ.-ին Հունաստան այցի ժամանակ ԹՀ նախագահ Ռեջեփ Թայիփ Էրդողանը առաջին անգամ բարձրաձայնեց 1923թ.-ի

Լոզանի պայմանագրի վերանայման և Դոդեկանեզի հունական կղզիները Թուրքիային վերադարձնելու անհրաժեշտության մասին: Սա վկայում է, որ հանրապետական Թուրքիան այսօր ևս ձգտում է իրականացնել Ազգային պետության երիտթուրքական տեսլականը՝ իր սահմաններով:

Այս տեսակետից Ռեգինա Գալուստյանի ատենախոսության թեման ոչ միայն արդիական է, այլև ունի կիրառական նշանակություն, քանի որ թույլ է տալիս հասկանալու այսօրվա Թուրքիայի գաղափարախոսության և քաղաքականության հիմքերը: Ատենախոսը տարբեր աղբյուրների և աշխատությունների գիտական վերլուծության հիման վրա ներկայացնում է այն հիմնական եվրոպական գաղափարական ուղղությունները, որոնք ազդեցություն են թողել երիտթուրքերի գափարախոսության և հայացքների ձևավորման վրա, դրանց թվում նշելով սոցիալ-դարվինիզմը, ազգայնականությունը, ռասիզմը, «կենսական տարածքի» ընկալումը, փոքրամասնություններին որպես խոչընդոտ և ոչնչացման ենթակա տարր ընկալումը:

Ատենախոսն իրավացիորեն նշում է, որ եվրոպական մտքի մի շարք հոսանքներ, ինչպես, օրինակ, պոզիտիվիզմը, երիտթուրքերն փոխառել են ուղղակիորեն, իսկ օրինակ երիտթուրքերի շրջանում ազգայնականության գաղափարների տարածման գործում զգալի դերակատարություն են ունեցել ռուսաստանիցի թաթար պանթուրքիստները՝ Յուսուֆ Աքչուրան, Իսմայիլ Գասպրինսկին և այլք:

Ատենախոսությունում հանգամանալից ներկայացվում է, որ եվրոպական գիտական մտքի ազդեցության ներքո օսմանցի թուրքերն սկսել են ընկալել, որ Ռուսաստանի և Միջին Ասիայի թյուրքալեզու ժողովուրդները հանդիսանում են ազգակիցներ, ինչպես նաև «թուրք» բառը անկիրթ գյուղացու խորհրդանիշից վերածվել է խիզախության խորհրդանիշի:

Ռեգինա Գալուստյանը հիմնավորված ներկայացնում է ազգայնականության, ազգայնամոլության էվոլյուցիան «Միություն և առաջադիմություն» կոմիտեի շրջանակներում, ազգային պետության և ազգային տնտեսության անհրաժեշտության գաղափարների ձևավորումը և դրանցում գերմանական քաղաքական մտքի ազդեցությունը (ինչպես օրինակ երիտթուրք բարձրաստիճան սպայության շրջանում

Ֆոն դեր Գոլցի տեսակետների, ազգային պետության տեսլականի, ինչպես նաև ազգային տնտեսության ստեղծման ձևավորման վրա՝ Պարվուսի գաղափարների ազդեցությունը):

Կարևոր է ատենախոսության այն հատվածը, որտեղ ներկայացվում է թուրքերի մոտ Անատոլիայի «կենսական տարածքը» ամբողջ Փոքր Ասիասիայի տարածքի վրա տարածելու գաղափարական զարգացումը, Ռումելիան Անատոլիայով փոխարինելու անհրաժեշտությունը, այն թուրքական հայրենիք դարձնելու և այդ ճանապարհին հիմնական խոչընդոտ հանդիսացող հայ տեղաբնիկ բնակչության ոչնչացման ընկալումը, Բալկանյան պատերազմներից և Իթթիհադի միակուսակցական կառավարման շրջանում «մենք և նրանք» տարանջատման հստակեցումը:

Ատենախոսության կառուցվածքը գիտականորեն հիմնավորված է, քանի որ առաջին գլխում հեղինակը ներկայացնում է եվրոպական այն գաղափարները, որոնք ազդեցություն են թողել «Միություն և առաջադիմություն» կուսակցության վրա, երկրորդ գլխում վերլուծում է կոնկրետ դրվագներ, իսկ երրորդ գլուխը ներկայացնում է գործնական փուլը՝ եվրոպական գաղափարների ազդեցությունը Հայոց Մեծ եղեռնի վրա:

Ռեգինա Գալուստյանի թեկնածուական ատենախոսությունն իրենից ներկայացնում է կուռ գիտական շարադրանք, պատճառահետևանքային ներկայացում և լուսաբանում է աշխատությունում բարձրացված խնդիրները: Միաժամանակ հարկ ենք համարում նշել մի շարք դիտարկումներ.

1. Ատենախոսության թեմայից և բարձրացված խնդիրների տեսակետից նպատակահարմար կլիներ, որ հեղինակն օգտագործեր Ֆուադ Դունդարի աշխատությունները[1] ինչպես նաև Մերի Քոչարի մենագրությունը[2]:

---

[1] Fuat Dündar, İttihat ve Terakki nin Müslüman İskan Politikası (1913-1918), İstanbul 2001; Fuat Dündar, Kahir Ekseriyet Ermeni Nüfus Meselesi (1878-1923), İstanbul 2012; Fuat Dündar, Modern Turkiye'nin Şifresi İttihat ve Terakki'nin Etnisite Muhendisliği (1913-1918), İstanbul 2008

[2] Мери Кочар, Армяно-турецкие общественно-политические отношения и армянский вопрос в конце XIX - начале XX веков, Ереван 1988.

2. Ատենախոսության մեջ հեղինակը չի անդրադարձել այսպես կոչված Իթթիհադի «ձախ» հոսանքին, որի ներկայացուցիչներն են Քարա Քեմալը, Քոռ Ալի Իհսանը, որոնց վրա ազդեցություն են ունեցել Պարվուսը, Ռակովսկին և այլոք: Ինչ վերաբերվում է Պարվուսին, ատենախոսը սահմանափակվում է թուրքական ազգային տնտեսության ստեղծման վերաբերյալ նրա տեսակետների ներկայացմամբ: Մինչդեռ Իթթիհադի «ձախ» հոսանքի ներկայացուցիչները կարևոր դերակատարություն են ունեցել Հայոց ցեղասպանության իրագործման գործում, ինչպես օրինակ Քարա Քեմալի խմբակի անդամ, Իթթիհադի ձախ թևի ներկայացուցիչ, հայ բնակչության ոչնչացման գործում առանձնահատուկ դերակատարություն ունեցած Դեր Զորի մյութասարիֆ Սալիհ Զեքի Կուշարկովը, ով հետագայում դարձավ Թուրքիայի կոմունիստական կուսակցության հիմնադիր:
3. Ցանկալի կլիներ, որ ատենախոսն ավելի հանգամանալից անդրադառնար հայկական ունեցվածքի յուրացման, նոր ազգային թուրքական բուրժուազիա ստեղծելու գործում եվրոպական մտքի գաղափարական ազդեցության վերլուծությանը, ինչպես օրինակ այն գաղափարներին և մոտեցումներին, որոնք թուրքական «Զիրաաթ» բանկի ստեղծման հիմք հանդիսացան: Հայտնի է, որ հայերի ոչնչացման կազմակերպման գործում, ինչպես, օրինակ Այնթապում, կարևոր դերակատարություն են ունեցել վերոհիշյալ բանկի ներկայացուցիչները:

Նշված դիտարկումները չեն ազդում ատենախոսության ընդհանուր բարձր որակի վրա, եզրակացությունները բխում են տեքստի շարադրանքից, իսկ հեղինակի հրատարակած հոդվածներն արտացոլում են ատենախոսության հիմնական դրույթները: Ատենախոսությունը համապատասխանում է թվանիշին, մասնագիտությանը, ինչպես նաև ԲՈԿ-ի կողմից թեկնածուական ատենախոսություններին ներկայացվող պահանջներին, իսկ Ռեգինա

Գալուստյանն արժանի է հայցած պատմական գիտությունների թեկնածուի աստիճանին:

Պաշտոնական ընդդիմախոս
պ.գ.դ., պրոֆեսոր Արսեն Գագիկի Ավագյան

Ա. Ավագյան

05.11.2024թ.

Հաստատում եմ Արսեն Գագիկի Ավագյանի ստորագրությունը

ՀՀ ԱԳՆ անձնակազմի կառավարման վարչության խորհրդական, վարչության պետի պարտականությունները կատարող՝ Օֆելյա Սարգսյան